

լուսոյ անհուն խուրձ մը դիշերային խաւարը կը փարատէր :
— ԱՇ, տէրս, կանչեց ձ՞ոյ :
— Չայն մի հաներ, ըստ տոփդորը :
կը շարունակուի :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Վեհանձնութեան օրինակ մը . — Լեհացի կալուածատէր մը, Քոսովաքի, որ շատ երկիրներ ունէր Մոյլեվի իշխանութեան մէջ, լեհաց վերջին ապստամբութեանն առժիւ յանցաւոր գտնուելով տէրութեան առջև, Սիպերիա պատրուեցաւ :

Երկու տարի հոն կենալէն ետքը՝ կայսեր չնորհքովը ազատութիւնը ձեռք ձգելով, դարձաւ իր երկիրը . բայց սըրտին մեծ ցաւովը տեսաւ որ իր ամեն ստացուածքը տէրութենէ գրաւած կամ վաճառուած էին, կինը մեռած, զաւկըները օտար աշխարհներ պանդրխտութեամբ հեռացած . միայն պղտի որդին մնացեր էր, որուն վրայ ձեռք դրեր էին բարեկամքը ու սնուցեր և դաստիարակեր :

Քոսովաքի ստիպուեցաւ իր մէկ բարեկամին ապաւինիլ, ու իրմէ 150 ռուբլի փոխ առաւ, որպէս զի կարենայ անով զործի մը ձեռք զարնել . և խոստանալով իրեն որ վեց ամսէն ետքը վճարէ, քովը դրաւ դրաւ ոռւսի վիճակահանութեան տոմսակ մը . վասն զի այնչափ ստացուածքէն և հարստութենէն ատիկայ միայն մնացեր էր խեղճին քով :

Վրան երկու տարի անցաւ . ու Քոսովաքի դեռ չէր կրցած պարտքը վճարել, երբ յանակնկալս իր տոմսակին թիւն ելնելով, 200,000 ռուբլի (800,000

ֆրանք) վաստրկեցաւ : Մէկէն ուրախութեամբ վազեց բարեկամին, և կ'ուզէր որ ստրկին կէսը իրեն թողու . բայց անիկայ վեհանձնութեամբ ամեն փոխարինութենէ հրաժարելով, յանձնեց միայն որ նոյն քաղքին աղքատներուն օդնութիւն մը ընէ :

Բարերար աղքատ մը . — Մօտերս Միլան քաղաքին մէջ հասարակաց բարեկարգութեան պաշտօնեայք աղքատ մը բանեցին՝ այնպիսի խեղճ վիճակի մը մէջ որ ամեն տեսնողին գութը կը շարժէր : Դատաւորը որոշեց որ մուրացիկներու համար որոշուած պատսպարուելու տեղը խրկուի :

Աղքատը սկսաւ բողոքել ու դէմ կենալ, ըսելով թէ այնպիսի տեղուանք միջոց ու ստակ չունեցող խեղճերուն համար է, չե թէ իրեն որ երկուքէն ալ զուրկի չէ :

« Ո՞ւր է քու հարստութիւնգ », հարցուց դատաւորը :

« Կալուածներու ու զանազան արժէ տոմսակներու վրայ » պատասխանեց կարծուած աղքատը :

« Ուրեմն ինչու մուրացիկ կը շրջիս » բնականաբար պիտի հարցընէր դատաւորը :

« Որպէս զի, ըսաւ, ինծի նման՝ բայց ինծի կարօտ աղքատներուն բարիք կարենամ ընել » :

Դատաւորը մարդիկ խրկելով քննեց իմացաւ թէ յիրաւի 100,000 ֆրանքէն աւելի հարստութիւն դիզած է եղեր, և թէ երեսուն տարուընէ ՚ի վեր մուրացկանութիւն կ'ընէր :

Իրաւ էր արդեզր ուրիշ խեղճերուն օդնութեան հասնելը : Հոն էր տարակոյսը . զատաւորը ստուգելու համար՝ հարկ սեպեց քննութեան տակ ձգել զինքը :